№ 72 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 28 — 1888 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 28 № 72

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tifiis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ արեցինք ամբողջ տարին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վիլհելմ II կայսրը և գերմանական բէյխստագի բացումը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժամանակակից հայոց լեզուի մշակութիւնը.

ԻՆՉ ԱՐԵՑԻՆՔ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԻՆ

—

Ամառը եկաւ, մեր հասարակական և ազգային հաստատութիւնների գործիչները Թողնում են Թոզոտ և խեղդող քաղաքը և գնում են այլ և այլ ամարանոցները՝ մաքուր օդ ծծելու համար։

Բայց քաղաքից դուրս գալու բօպէին Թող հաշիւ տան իրանց՝ ի՞նչ շինեցին ամբողջ տարի, անցեալ ամառվանից սկըսած, ի՞նչ էր իրանց գործունէութիւնը անցեալ յուլիս ամսից մինչև ներկայ Թուական տարի, ի հարկէ ոչ։

Ի՞նչ եղաւ հայոց Թատրօնի գործը,—կորաւ անդառնալի։

Ինչ է անում հայոց Բարեգործական ընկերութիւնը,—նրա մասին ոչինչ չէ լսվում, ինչպէս միշտ և նրա վերաբերմամբ հասարակաց կարծիքի համակրութիւնը ոչ Թէ միայն չէ աւելանում, բայց հետզհետէ պակասում է։ Դրան Թող վկայ լինի ընկերութեան անդամների Թուի հետզհետէ պակասելը։

Այնուհետև ի՞նչ է անում մեր Թարգմանական ընկերութիւնը,—դրա մասին ոչինչ չէ լսվում։

Ի՞նչ է անում կանանց Բարեգործական ընկերութիւնը,—միակ բան, որ նրա մասին լսվում է, այդ այն է որ կար ու ձևի ինչ որ դպրոց է ուզում հիմնել։

Ահա մեր հասարակութեան ինտելիգենցիայի ամբողջ գործունէութեան շրջանը, եթէ չը հաշուենք քաղաքային դումման, որի այս տարվայ գործունէութիւնն էլ շատ արդիւնաւորներից չէ եղել և մեր մի քանի կլուբները, որոնց ամբողջ գործունէութիւնը բաղկացած է Թղթախաղից։

Հասարակական, ազգային, դպրոցական, բարեգործական, եկեղեցական գործերը երեսի վրա, անշարժ, մեռած դրութեան մէջ Թողած, մեր գործիչները յոգնած իրանց եռանդոտ գործունէութիւնից, որը միմիայն բաղկացած էր ամեն օր յայտնի մասնաւոր ծառայութիւն գնալում, ուտելում, խմելում, բամբասելում, Թուղթ խաղալում և քնելում, յոգնած, ասում ենք, իրանց ծանր, հասարակաօգուտ, ազգաշէն և արդիւնաւոր գործունէութիւնից,—գնացին ամարանոցները այդքան ծանրը աշխատանքից յետոյ հանգստանալու համար։

Եւ այդպէս տարուց տարի ընթանում են մեր բոլոր գործերը և ոչինչ առաջադիմութեան նշոյլ անգամ չէ երևում նրանց մէջ։

Աշունքը կը գայ,—բոլոր այդ եռանդոտ գործիչները կը վերադառնան քաղաք, մինչև միւս ամառը ոչինչ չը շինելու համար, կամ աւելի լաւ է ասենք՝ կրկին ծառայութիւն գնալու, ուտելու, խմելու, Թուղթ խաղալու, բամբասելու և քնելու համար,—իսկ ամառը կրկին կերթան ամարանոցները քնաթաթախ և ուժասպառ ոչինչ չը գործելուց։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Դերբէնդ, 16 յունիսի

Կարդացինք ձեր պատական «Մշակ» լրագրի № 65-ի մանր լուրերի բաժնում Դերբենդից հաղորդած մի լուր հետևեալ բովանդակութեամբ։ «Հայոց երկսեռ դպրոցների հարցաքննութիւնները վերջացան։ Անցեալ տարի աշակերտները աւելի առաջադէմ էին երևում, իսկ այս տարի հարցաքննութիւնները շատ Թոյլ անցան։» Ճշմարիտ, զարմանալի է, որ դեռ ևս կան այնպիսի մարդիկ, որոնք օր ցերեկով կամենում են սպիտակը սևացնել և իրանց անձնական կլքերին բաւականութիւն տալու համար ստուեր ձգել այս կամ այն հիմնարկութեան վարչութեան վրա։ Հոգաբարձութիւնս անհրաժեշտ է համարում այժմ ձեր պատական Թերթի միջոցով հերքել այդ լուրը և յայտնել ի գիտութիւն ընթերցողների, որ մեր երկսեռ ուսումնարանի այս տարվայ քննութիւնները անցեալ տարվանից անհամեմատ լաւ էին։ Օրինակ, երրորդ բաժանմունքից աւարտած աշակերտները և աշակերտուհիները ոչ միայն բերանացի պատասխաններ էին անում, այլ և թելադրութիւնները գրում էին անսխալ, Թուաբանութիւնից անցել էին աջող կերպով մինչև իսկ չորրորդ տարվայ դասընթացքը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

—

ՄԱՄՈՒԼԸ ՄՇԱԿՈՒՄ Է ԹԷ ԱՂԱՒԱՂՈՒՄ Է ԼԵԶՈՒՆ

Երկրորդ Թեզիսը, որի դէմ մենք ուզում ենք խօսել, այն միտքն է, որը մեր ինտելիգենցիան նոյնպէս անդիր է արել, առանց հասկանալու իր ասածները՝ Թէ պարբերական մամուլը անընդունակ է մշակել գրական լեզուն, այլ ընդհակառակըն աղաւաղում է այդ լեզուն, քանի որ լրագրական յօդուածները միշտ շտապով են գրվում, ուրեմն նրանց գրելու ժամանակ անհնարին է գըլուխ դնել լեզուի ոճը կոկելու, նրան գեղարուեստական դարձնելու։

Այդ միտքը սխալ է, այն պատճառով, որ զանազան ժամանակներում մի և նոյն գաղափարը կարող է կամ ճշմարիտ լինել, կամ սխալ,—հարկաւոր է միայն իմանալ իր սեփական խելքով դատել, և ոչ Թէ չը հասկացած, չը կշռած՝ կըրաւորական կերպով կրկնել ուրիշներից վերցրած, շրջող, անդիր առած ֆրազները։

Մի յայտնի չափով, ճշմարտութիւնը, եթէ նա միայն չէ շօշափում հիմնական բարոյական գաղափարները՝ երբէք բացարձակ, անփոփոխ չէ լինում, այլ միշտ վերաբերական և փոփոխական է։

Մարդկութեան հին քաղաքակրթութիւնը արիստոկրատական էր։ Ամեն բան՝ Թէ նիւթական ապահովութիւնը և Թէ մտաւոր ու հոգևոր կեանքի բարիքը վայելում էին ազգի բարձր դասակարգերը, վայելում էր ազգի փոքրամասնութիւնը։ Իսկ ազգի ստորին դասակարգերը զրկված էին ամեն բանից՝ Թէ նիւթական ապահովութիւնից, Թէ հոգևոր կեանքից, Թէ իրաւունքներից, Թէ նոյն իսկ ուսումից ու գրագիտութիւնից։ Հին քաղաքակրթութիւնը ներկայացնում էր մեզ հետևեալ պատկերը՝ մի կողմից ամեն բան վայելող ընտրեալներից բաղկացած, արտօնացած դասակարգը, իսկ միւս կողմից ամեն բանից զուրկ, տգէտ, անդրագէտ, իրաւազուրկ ամբոխը։ Չը կար միջին դասակարգ, չը կար կրթված ամբոխ, չը կար ազգերի մէջ զարգացած մեծամասնութիւն, չը կար կրթված դեմոկրատիա։

Ոչ Թէ միայն հին Եգիպտոսում, բայց և հին ազատ Յունաստանում և փառաւոր Հռոմում կեանքի ամեն բարիքը վայելում էին միմիայն արտօնացած դասակարգերը։ Հարստութիւն, չքեղութիւն, գեղարուեստ, բանաստեղծութիւն, գրականութիւն, աստուածապաշտութիւն, քաղաքացու իրաւունքներ,—այդ բոլորը արտօնացած դասակարգերի սեփականութիւնն էր. իսկ մի և նոյն ժամանակ ամբոխի մեծամասնութիւնը փըտում էր աղքատութեան, տգիտութեան, անդրագիտութեան, նախապաշարմունքների և անասնական դրութեան մէջ։ Եգիպտոսում մինչև որ պիրամիդներ ու սֆինկսներ էին կառուցվում,—ամբոխը, որի ձեռքով և արիւն-քրտինքով էին կառուցվում այդ չքեղ արձանները, ինքն փտում էր ստրկութեան և անասնականութեան մէջ։ Աղատ Յունաստանում մինչև որ քաղաքացին զբաղվում էր գեղարուեստով, գրականութեամբ, հռետորութեամբ, Թատրօնով, փիլիսոփայութեամբ, կառուցանում էր իր աստուածների համար փառաւոր տաճարներ,—ամբոխը ստրկութեան մէջ էր մնում։ Հռոմում, մինչև որ Ցիցերոնը արտասանում էր իր աքանչելի ճառերը, իսկ Վիրգիլիոսը հեղինակում էր իր անմահ գրուածները,—ամբոխի մեծամասնութիւնը ոչ Թէ միայն չէր կարող հասկանալ նրանց յայտնած մտքերը, բայց և չէր կարող հասկանալ նրանց գործածած լեզուն, քանի որ այդ լեզուն ընտրեալների լեզուն էր և մատչելի չէր մեծամասնութեանը, մասսային։

Նոյն իսկ միջին դարերում և մեր ժամանակից քաղաքակիրթ Եւրոպայում, մինչև բողոքականութեան յայտնվելը Գերմանիայում և մեծ յեղափոխութեան կատարվելը Ֆրանսիայում, ազգերի ամբոխը, մեծամասնութիւնը՝ մասնակից չէր ազգերի արտօնացած դասակարգերի առաւելութիւններին, մասնակից չէր քաղաքակրթութեան հոգևոր, մտաւոր և իրաւական բարիքներին։

Այդ տեսակ դրութեան մէջ գրականական լեզուն էլ, որը մարդուս մտաւոր և հոգևոր կեանքի արտայայտիչ ու ամենազօրեղ գործիքն է՝ չէր կարող մատչելի լինել ազգի մեծամասնութեանը, այլ նա մնում էր ազգի փոքրամասնութեան, արտօնացած դասակարգերի սեփականութիւն։ Այդ պատճառով Թէ հին և Թէ միջին դարերում մըշակել լեզու բոլորովին ուրիշ բան էր նշանակում, քան Թէ նշանակում է այժմ։ Մենք ասեցինք որ ճշմարտութիւնների մեծամասնութիւնը, բացի ամենահիմնական բարոյական ճշմարտութիւններից, փոփոխական են համեմատ ժամանակի պահանջման և ժամանակի կեանքի կերպարանափոխութեան։ Հին և միջին դարերում, քանի որ գրական լեզուն, ինչպէս ամեն բան, որոշ արտօնացած դասակարգերի սեփականութիւն էր, ուրեմն մատչելի էր միմիայն յայտնի դասակարգերին և ոչ Թէ ամբոխի մեծամասնութեան,—այդ գրական լեզուն հարկ չունէր ընդունել Թեթև, հասարակ, պարզ, ժողովրդի հասկացողութեանը մատչելի ձևեր։ Լեզուն այնքան արիստոկրատական էր, որքան արիստոկրատական էր այն դասակարգը, որի համար նա գոյութիւն ունէր։ Հարկ չունենալով ժողովրդացնել միտքը, և գոյութիւն ունենալով միմիայն առանձնաշնորհումներ վայելող դասակարգերի համար, գրական լեզուն ամեն ջանք էր գործ դնում բարձրաբան, չքեղ, ծաղկած, կոկ, խրթին, սխոլաստիական լինել.... Այն ժամանակներում մշակել լեզուն՝ նշանակում էր հարստացնել նրան կոկ ասացուածներով, բարդել նրան ծաղկառատ դասաւորութիւններով, քանի որ գրողների նպատակն էր միմեանց մէջ մրցել վսեմ ոճերով, միմեանց շլացնել լեզուի ծաղկած, խրթին կոնստրուկցիայով։ Նրանց ինչ փոյթ էր Թէ մասսան, ամբոխը, չէր հասկանում և չէր կարող հասկանալ նրանց.... նրանք ամբոխի, ժողովրդի համար չէին գրում, այլ գրագէտների մի նեղ շրջանի համար։

Քաղաքակիրթ մարդկութեան վերջին դարերում միայն սկսեց նշմարվել ձգտում դէպի ամեն բան ժողովրդացնելն ու դեմոկրատիզացիա։

Գերմանական բողոքականութիւնը առաջինն էր, որ Աստուծու խօսքը մատչելի, հասկանալի, ժողովրդական դարձրեց ամբոխի համար, Ֆրանսիական յեղափոխութիւնը հրատարակելով մարդկային իրաւունքները, հաւասարեցրեց դասակարգերը, փշրեց արտօնութիւններն ու առանձնաշնորհումները.... Տպագրութեան գիւտը մատչելի դարձրեց ամենքի համար գրագիտութիւնը, տեղափոխութեան, երթևեկութեան և հաղորդակցութեան հեշտացնելն ու էժանացնելը չոգենաւերի երկաթուղիների և հեռագրական թելի միջոցով մատչելի դարձրեց մեծամասնութեանը աշխարհիս

և այլն և այլն։ Հոգաբարձութիւնս, ի նկատի ունենալով ուսուցչական խմբի այդօրինակ աշխատանքը՝ վարձատրեց նրանց թէ ռոճիկները աւելացնելով և թէ վերջնական ակտում ժողովրդի ներկայութեամբ յայտնելով նրանց իր անկեղծ շնորհակալութիւնը։

Իսկ ինչ վերաբերում է լրատուին, լինի նա պարոն թէ օրիորդ, խորհուրդ կը տանք աւելի համեստ լինել և չը զրպարտել։ Գոնէ խնայեն այն թերթը, որին աշխատակցում են և չը վնասեն նրան իրանց հաղորդած սուտ և զրպարտիչ լուրերով։

Նախագահ հոգաբարձութեան, Աբրահամ քահանայ Սպանդունեանց. Անդամ հոգաբարձութեան՝ Աստուածատուր Ազատեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Անցեալ կիրակի, Էջմիածնի տօնին, հոգևորական կոչումն պէտք է ընդունէին վարդապետ ձեռնադրվելով՝ պ. Արշակ Նահապետեան, պ. Գալուստ Տէր-Մկրտչեան և ճեմարանում այս տարի աւարտող աշակերտներից 6 հոգի։»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութեան գործերի վրա նշանակվում է քննութիւն։ Այս բանին ոչ սակաւ նպաստել են «Մշակի» մէջ տպված յօդուածները Շուշու գործերի մասին։»

—

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ հետևեալը։ «Ամսիս 14-ին քաղաքային դպրոցի հարցաքննութիւնները վերջացան։ Տարեկան ակտից յայտնվեց, որ աւարտողները միայն 3 հոգի էին, որոնցից երկուսը հայ են, իսկ մէկը վրացի։»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ գերեզմանատունը, ինչպէս մեզ գրում են, գտնվում է քաղաքի կենտրոնում մի բարձր ժայռոտ բլրի վրա, որը՝ մինչև այսօր չունէր մի կանոնաւոր ճանապարհ մինչև անգամ հետևակների համար։ Այժմ չնորհով դէպուտատ Մ. Ադիրիկեանի պատրաստում են դէպի գերեզմանոցը մի հարթ ճանապարհ, որը մինչև անգամ սայլերի երթևեկութեան համար յարմար կը լինի։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են։ «Այստեղի մի հայ օրիորդ, որը աւարտել է իր ուսումը և սովորել է կար ու ձև ամենանոր մեթոդով, մտադիր է քաղաքում բանալ կար ու ձևի ուսումնարան, որի մէջ մեծ կարօտութիւն է զգացվում մեր չքաւոր օրիորդների մէջ։ Ցանկանում ենք օրիորդին աջողութիւն։»

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են։ «Այս օրերս այստեղ մի տարօրինակ նշանագրութիւն կատարվեց. մի 65 տարեկան ծերունի, որի կինը արդէն վախճանվել էր, ամուսնացել է այժմ մի 22 տարեկան օրիորդի հետ։ Այդ ամուսնութիւնը ամբողջ քաղաքի խօսակցութեան նիւթ էր դարձել մի քանի օր շարունակ։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ վախճանվեց մի հարուստ մարդ, Ց. Գէորգեան, որը կատակել է տեղիս թեմական դպրոցին 400 ռուբլի, իսկ Գայիանեան դպրոցին 200 ռուբլի։»

—

Մեզ հաղորդում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ հետևեալը։ «Քաղաքիս դէպուտատ պ. Ադիրիկեան շարունակում է հոգալ քաղաքիս բարեկարգութեան վրա։ Բացի ճանապարհից, որ պարոնը չինել տուեց դէպի գերեզմանոցը, նա դաշտում, որտեղ հողագործները վարում են, չինել է տուել մի լճակ, եղներին այդտեղ ջուր խմացնելու համար։ Ջուրը բերված է Քեարիմքենդ կոչված գիւղից։ Իսկ մինչև այժմ հողագործները ստիպված էին իրանց եղները քաղաք բերելու կենդանիներին ջուր խմացնելու համար։

—

Շոքերը սկսվել են ԹԻՖԼԻՍՈՒՄ, թողը անտանելի է փողոցներում, մանաւանդ քամու ժամանակ։ Փողոցները շատ անկանոն կերպով են ջրվում։

—

Խնդրում ենք «Մշակի» բաժանորդներին վերջապէս ուղարկել խմբագրութեանը իրանց վրա մնացած ապառիկները։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒՒՑ հետևեալը։ «Կարդացի «Մշակի» № 67-ում «Քահանայի և երեցփոխի հարցը Բագուի մէջ» անստորագիր յօդուածը. նրա մէջ կայնի մի քանի թերութիւններ, որոնց մասին աւելորդ եմ համարում մի խօսք անգամ ասել. միայն յօդուածի վերջում հեղինակը ասում է. «Հետևեալ պարտաւորութիւնների դրծադրութիւնը սահմանափակվում է միայն երեք քահանաների համար, իսկ Խորէն ա. քահ. Մելիքզարէգեան գործակալը մի և նոյն ժամանակ արտօնութիւն է ունենում ազատ լինել այդ հերթապահութիւնից։» Բոլորովին սխալ է այդ վերջին միտքը, թէ Խորէն ա. քահանայ գործակալը ազատ է հերթապահութիւնից. ամենից առաջ նոյն գործակալն է ստորագրել այդ հերթապահութեան կանոնները, նոյն իսկ յիշված պարտաւորութիւնները կատարող երեք քահանաների թիւումն է և գործակալը, որը առաջին հերթապահը հէնց ինքն եղաւ և իրանից սկսվեց գործադրութիւնը։ Այդ յօդուածի հեղինակը կամ անտեղեակ է գործից կամ անուղիղ մտքից թելադրված։»

—

Դօրպատի լրագիրների խօսքերով, ներկայ տարվայ օգոստոս ամսից Դօրպատի գիմնազիաների ստորին դասատներում լատինական լեզուն դաս կը տրվի ռուսաց լեզուով։

—

«Русскій Курьеръ» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը։ «Ցայտնի է, որ երբ կառավարական կարգադրութիւն եղաւ ռուսաց լեզուն մտցնել Բալտեան բոլոր գերմանական ուսումնարաններում, այդ երկրի գերմանացիները սկսեցին մեծ թւով մասնաւոր գերմանական ուսումնարաններ բանալ Լիֆլեանդեան, Էստլանդեան և Կուրլեանդեան նահանգների բոլոր քաղաքներում և գիւղերում։ Այդ շարժումը մեծ աջողութիւն ունէր ամեն տեղ և գերմանական դպրոցները սունկի պէս էին բուսնում այդ բոլոր տեղերում։ Կառավարութիւնը նկատելով այդ շարժումը և տեսնելով որ ռուսաց ուսումնարաններում աշակերտները շատ պակասում են, դիտաւորութիւն ունի այլ ևս չը թոյլ տալ գերմանական նոր ուսումնարանների բացումը պրիբալտեան նահանգներում, հասկանալով դրանց վնասակարութիւնը ռուսաց գաղափարի տարածման համար վերոյիշեալ երկրում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻԼՀԵԼՄ II ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՐԵՅԽՍՏԱԳԻ ԲԱՅՈՒՄԸ

—

Վիլհելմ II կայսրը, որը երկու շաբաթ առաջ անձամբ բացեց գերմանական ռեյխստագը, երէկ, որպէս պրուսական թագաւոր, բացեց պրուսական սեյմի նստաշրջանը և բոլոր պատգամաւորների ներկայութեամբ հանդիսաւոր խոստմունք տուեց սահմանադրութեան համաձայն կառավարել պետութիւնը։

Ապա կայսրը յայտնեց իր պրոգրամը, որով ցանկանում է ղեկավարել գերմանական կայսրութիւնը։ Այդ պրոգրամի մէջ ասված է, որպէս յայտնի է, որ ինքն, կայսրը կը շարունակէ իր փառաւոր պապի քաղաքականութիւնը։ Թագաւորը յայտնեց, որ ցանկանում է նպաստել չքաւոր դասակարգերի դրութեան բարւոքման, յարգել բոլոր օրինական իրաւունքները, պաշտպանել բարձրագոյն իշխանութեան իրաւունքները, խիստ ամենաւորութիւն անել պետական ծախսերի մէջ և խաղաղ յարաբերութիւններ պահպանել զանազան դաւանութիւնների մէջ, ամեն հանգամանքում սահմանադրութեան համաձայն վարվելով։

Գերմանական լրագիրների մէջ տպված է հետևեալ ազդէսը, որ ուղարկել է Վիլհելմ II-ին գերմանական ռեյխստագը, որպէս պատասխան կայսերական գահական ճառի։

«Գերմանական ռեյխստագը խորին կերպով վշտակից է ձեր կայսերական մեծութեանը Ֆրիդրիխ կայսրի մահուան պատճառով։ Գերմանական ժողովուրդը հաւատացած էր, որ անմոռանալի Վիլհելմ կայսրի սկսած գործը կը պահպանվի ձեր հօր ապահով ձեռքերում, և որ նրա իմաստուն ղեկավարութեամբ Գերմանիայի բարօրութիւնը խաղաղ աշխատանքի միջոցով ամենաբարձր զարգացմանը կը հասնի։ Աստուծուն հաճելի էր այլ կերպ վճռել։ Մի քանի ամիս շարունակվող թագաւորութիւնից յետոյ, մեզ վիճակվեցաւ թաղել սիրած կայսրին։ Նրա վրա դրված գեղեցիկ յոյսերը ցրվեցան. բայց նրա յիշատակը անջինջ կը մնայ գերմանական ժողովրդի սրտում։ Ամենածանր ժամանակներում ցոյց տալով պարտաճանաչութեան փայլուն օրինակ, հերոսական քաջութիւն թէ արտաքին և թէ ներքին գործունէութեան մէջ, այդ բոլոր յատկութիւնները յաւիտեան անմոռանալի կը մնան և կարող են կրթիչ ներգործութիւն ունենալ ապագայ սերունդների վրա։ Ամենամեծ ուրախութեամբ և երախտագէտ զգացմունքով լսեցինք ձեր մեծութեան շրթունքներից, որ դուք վճռել էք ընթանալ հանգուցեալ Վիլհելմ կայսրի շաւղով, որով Վիլհելմ կայսրը գրաւեց դաշնակից թագաւորների վստահութիւնը, գերմանական ժողովրդի սէրը և օտար պետութիւնների բարեացակամ յարգանքը։ Ձեր մեծութիւնը ցանկանում է անխախտ պահպանել կայսերական սահմանադրութիւնը, կատարելագործել գոյութիւն ունեցող օրէնքները Գերմանիայի փառքի համար, և մանաւանդ, թշուառներին և թոյլերին պաշտպանելու նպատակով պաշտպանել արդարադատութիւնը և օրինականութիւնը։ Ձեր այդ բարձրագոյն կամքը իրագործելում ռեյխստագը իր կարողութեան չափ պատրաստ է օգնել ձեզ։ Ռեյխստագը յոյս ունի, որ Ամենակարողը կը հովանաւորէ ձեզ այդ գործում։ Դաշնակցութիւնների և բարեկամական յարաբերութիւնների վրա յենվելով, ձեր մեծութիւնը վճռել է խաղաղութիւնը պահպանել մինչև այն ժամանակ, մինչև որ չեն ստիպի մեզ ակամայ պատերազմի դաշտը դուրս գալ։ Ձեր մեծութիւնը ցան-

---

չորս կողմ պատելը, աշխարհիս հետ ծանօթանալը։ Ուսման, տեխնիկայի, առևտրի, արդիւնաբերութեան, ժողովրդական գեղարուեստի զարգացումը, ժողովրդի հետզհետէ մասնակցութիւնը պետական կառավարչական գործերում, դպրոցական համաղասակարգային լայն սիստեմը, սկսած տարրական դպրոցներից մինչև համալսարանները, ժողովրդի պարտադիր ուսումը և պարտադիր դրագիտութիւնը, դաւանութիւնների հաւասարութիւնը, ընդհանուր զինուորագրութիւնը, որը հաւասարեցրեց հասարակական բոլոր դասակարգերը, հասարակական ընտրողական սկզբունքի հետզհետէ ընդարձակվելը, և այն և այն,—այդ բոլորը հետզհետէ նպաստում էր մարդկային հասարակութեան դէմոկրատիզացիային և այդ բոլորը ծնեցրեց մի հասարակական գործիչ, մի հասարակական կրթողական ոյժ, որը անծանօթ էր՝ հին միջին և նոր դարերին, այլ հարազատ ծնունդ է միմիայն նորագոյն, ամենավերջին երկու դարերի.... Այդ ոյժը՝ պարբերական մամուլն է։

Պարզ է, որ մամուլը լինելով ժողովրդական և ժողովրդացնող գրականութիւն, լինելով մարդկային հասարակութեան դէմոկրատիզացիայի հետևանք և աւելի էլ դէմոկրատացնելով (ռամկացնելով) միտքը, չէ կարող այդ իր միտքը արտայայտել այն ընտրեալ, վսեմառճ, ծաղկած, խրթին լեզուով, որով գրվում էին թէ անցեալ դարերի ամեն ազգերի մատենագիրների հեղինակութիւնները, (որոնք գրվում էին ընտրեալների մի նեղ շրջանի համար, և ոչ ամբոխի մեծամասնութեան համար) թէ նոյն իսկ վերջին դարերի եւրոպացի ոճաստէղների կամ ոճամոլների գրուածները, որոնց գլխաւոր նպատակն էր ծաղկեցնել գեղարուեստական գրականութիւնը, իրանց ոճը վերջին ծայր կատարելագործութեան հասցնելով,—այլ լինելով կուլտուրական մարդկային հասարակութեան ահագին մեծամասնութեան մտքի արտայայտողը մի կողմից, և նրա կրթիչն ու ղեկավարողը միւս կողմից՝ մամուլը պէտք է մշակէ այնպիսի գրական նոր լեզու, որը մատչելի է քաղաքակրթական մեծամասնութեան, որը գործածվելի կարող է լինել քաղաքակիրթ մասսայի մէջ.... Եւ պարբերական մամուլն է, որը մշակել է մեր ժամանակակից մարդկութեան մէջ այն ընդհանրացած՝ հասարակ ոճ, պարզ և ոչ խճճված պարբերութիւններ ունեցող լեզուն, որը տիրապետող է դարձել այժմ ամեն տեղ՝ թէ դպրոցում ու համալսարանում, թէ քաղաքային ինքնավարութեան ու պարլամենտների ժողովներում, թէ դիպլոմատիական յարաբերութիւններում ու դատարանում, թէ առևտրական յարաբերութիւններում ու ամենօրեայ հասարակաց կեանքում, թէ թատրոնում ու եկեղեցական քարոզներում....

Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ ժամանակակից մամուլը ամենահզօր և ամենագէտ է։ Նա գիտէ և պէտք է գիտենայ ամեն բան, նա խօսում է և պէտք է խօսի ամեն բանի վրա,—ուրեմն նա պէտք է մշակէ մի բոլորովին նոր, մինչև այժմ չեղած, և անցեալ դարերին անծանօթ, ամեն յատկութիւններն ունեցող լեզու. զօրեղ, ճկուն, հարուստ, կտրուկ և համոզիչ, թէև պարզ և հասկանալի մի լեզու, որը յարմարվի ամեն տեսակ թէմաներին, քանի որ մամուլը պէտք է խօսի՝ և քաղաքական անդրքերի, և տնտեսական հարցերի, և հասարակական երևոյթների, և ուսումնական խնդիրների, և կրօնական կեանքի վրա.... Նա միաժամանակ վճռում է քաղաքական հարցերը, արձանագրում է ժամանակակից իրօնիկան, տալիս է ընթերցողին կարճ, սեղմված հեռագիրներ, դատողութիւններ է անում և գիւղատնտեսութեան, և հոգեբանութեան, և արհեստի, և գեղարուեստի, և զինուորական կեանքի, և մանկավարժութեան և առողջապահութեան ու բժշկականութեան վրա, պատմում է անեկդոտներ, ծանօթացնում է հեռաւոր երկիրների հետ, տալիս է ընթերցողին առևտրական և ֆինանսական տեղեկութիւններ, ծաղրական ֆելիետոններ, թեթև վէպեր, բոմանները ու պատմութիւններ և այլն և այլն....

Եւ մամուլը քանի գնում է, աւելի և աւելի է ընդարձակում իր հորիզոնը, իր ասպարէզը, իր գործունէութեան շրջանը, քանի գնում է աւելի և աւելի բազմատեսակ նիւթեր է ամփոփում իր մէջ, աւելի և աւելի է դառնում քաղաքակիրթ մարդկութեան ընդհանրական գրականութիւն։ Արդէն այնպիսի գրողներ, վիպագրողներ, բոմանիստներ, որոնք իրաւամբ պարծենում են իրանց մշակված, ծաղկած, ընտիր ոճով, չեն խորշում զետեղել իրանց ստեղծագործութիւնները պարբերական մամուլի էջերում։

Մամուլի լեզուի հակառակորդները ասում են. մամուլը, պարբերական մամուլը, նոյն իսկ մի որ և է «Temps», «Figaro» կամ «République Française» չեն կարող իրանց կոչտ, ծանր, անտաշ, կցկտուր լեզուով ժամանակակից գրական լեզուի մշակողներ համարվել, այլ այդ լեզուի մշակողներն են Ալֆոնս Դոդէ, Զօլա, Ֆլօբէր և այլ ժամանակակից վիպագրողներ.... Բայց այդպէս խօսողները մոռանում են, որ ժամանակակից մամուլը այն աստիճան տիրապետում է այժմ մտաւոր կեանքի ամեն ասպարէզների վրա, որ սկսել է ամփոփել իր մէջ և ժամանակակից ամենաընտիր վիպագրողներին էլ.... Եւ Դոդէ, Զօլա, կամ Ֆլօբէր, նախ քան իրանց բոմանները առանձին գրքերով տպագրելու, զետեղում են իրանց գրուածները նոյն «Temps», «Figaro», կամ «République Française» լրագիրների գծի տակի էջերում....

Այժմ մեր ժամանակակից հայոց մամուլի վրա խօսելով, պէտք է ասենք, որ մեր մամուլը աւելի էլ մեծ, աւելի էլ եղակի և բացառական դեր է խաղում ժամանակակից հայոց նոր լեզուի մշակութեան գործում, քան թէ օտար մամուլը իր ազգային լեզուի մշակութեան վերաբերմամբ, որովհետև մեզ մօտ, բացի մամուլից, իսկապէս ոչինչ չը կայ, մեզ մօտ մամուլից դուրս իսկապէս ոչինչ ուրիշ գրականութիւն էլ չը կայ։ Եւ ինչ որ մեզ մօտ աշխարհաբար լեզուով արդիւնաբերվում է, բոլորն էլ ամփոփվում է մամուլի մէջ, բոլորը զետեղվում է մեր լրագիրների և ամսագիրների մէջ։ Հօ, ճշմարիտ, չէ կարելի ասել, որ մեր մամուլը չէ, որ մշակում է մեր աշխարհաբար լեզուն, այլ նրան մշակում են տարեկան հրատարակվող այն երկու-երեք ինքնուրոյն թէ թարգմանական գրքոյկները, արձակ թէ բանաստեղծական ոճով գրված, որոնք արդասիք են մեծ մասամբ թերուս, դեռ աշակերտ, կամ աշակերտութիւնը նոր աւարտած երիտասարդ գրիչների.... Հօ չատ լաւ գիտենք, թէ մամուլից դուրս մեզ մօտ ոչինչ չէ հրատարակվում, բացի տարեկան մի տաս հատ, մեծ մասամբ անդրադէտ գրքոյկներից։

Իսկ ինչ որ կայ, լաւ թէ վատ,—այդ բոլորը անցնում է նախ մեր մամուլի միջոցով, անբաժան է մեր պարբերական մամուլից։ Ուրիշ խընդիր է, որ մամուլի օրգաններից մին աւելի խընամքով է մշակում լեզուն, միւսը պակաս խնամքով.... Բայց դա երկրորդական հարց է....

Ուրեմն լաւ թէ վատ՝ մեր ժամանակակից, նոր հայերէն աշխարհաբարը մեր պարբերական մամուլն է մշակում, և աւելի ոչ ոք։

(Կը շարունակվի)

կանում է պահպանել մեր զօրքի պատերազմական պատրաստութիւնը և հոգալ խաղաղութեան պահպանութեան մասին։ Գերմանական բէյխստագը կատարելապէս հաւանում է ձեր մեծութեան այդ բարձրագոյն յայտարարութիւնը։ Մենք նոյնպէս պատրաստ ենք ամէն զոհողութիւն անել մեր հայրենիքի պաշտպանութեան համար, որպէս միաձայնութեամբ ընդունեցինք այն բոլոր պահանջները, որ արաւ մեզ հանգուցեալ Վիլհելմ I կայսրը Գերմանիայի խաղաղութիւնը ապահովելու համար։ Սակայն մենք հաւատացած ենք, որ գերմանական ժողովրդի խաղաղութիւնը ոչ ոք չի խախտի։ Տայ Աստուած, որ ձեր կայսերական մեծութեանը վիճակված լինի բերել մեր հայրենիքին երջանիկ երկար տարիներ։ Թող Աստուած օրհնէ և պահպանէ մեր գերմանական հայրենիքը։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Արևելքի» մէջ կարդում ենք հետևեալը։ «Բարէրդի նորընտիր առաջնորդ Ռուբինեան արժ. Ամբրոսիոս վարդապետի պաշտօնը վաւերացնող կայսերական պէրատին յանձնված է ազգային պատրիարքարանին։»

—Մուշից հաղորդում են «Արևելքին» թէ հայկաթոլիկ առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը, որի վիրաւորման մանրամասնութիւնները յայտնի են, երկու շաբաթ դարմանվելուց յետոյ, այժմ կատարելապէս առողջացել է։

—Գերմանական այրի-կայսրուհի Վիկտորիա ստացել է կայսր Ֆրիդրիխ III-ի մահվան առիթով ցաւակցական հեռագիրներ անգլիական Վիկտորիա թագուհուց, իտալական Մարգարիտա թագուհուց և սպանական Խրիստինա թագուհիմամակալուհուց։ Առաջինը հեռագրում է՝ «Բռնադրդու մահվամբ անհետացաւ իմ շրթունքներից իմ կեանքիս վերջին ժպիտը։» Երկրորդը հեռագրում է. «Երբ մի անհատի դժբաղդութիւնը ընդհանուր ցաւ է պատճառում, այն ժամանակ աւելի հեշտ է տանել այդ դժբաղդութիւնը. մխիթարվիր, որովհետև քեզ հետ լայ է լինում և ամբողջ աշխարհը։»

—«Daily News» լրագրին Բերլինից հեռագրում են, որ Վիլհելմ II կայսրը յանձնեց իր սեփական ձեռքով գրած նամակը ռուսերէն լեզուով ռուսաց Կայսրին յանձնելու համար։ Այդ նամակի մէջ գերմանական նոր կայսրը յիշեցնում է Գերմանիան և Ռուսաստանը միացնող հին բարեկամութեան մասին և յոյս ու ցանկութիւն է յայտնում, որ այդ բարեկամութիւնը և յարաբերութիւնները պահպանվեն և զարգանան ապագայում. այդպէս էր հանգուցեալ Վիլհելմ I կայսրի կամքը, որ նա կտակեց իր յաջորդին։ Անգլիական լրագիրների խօսքերով, նամակը շատ բարեկամական ոգով է գրված։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բժշկապետ Մէկէնզի այժմ հանգիստ է առնում Շվէյցարիայում։ Նա ամենքի հետաքրքրութեան առարկայ է դարձել։ Այս օրերս նա հարկադրված էր հեռանալ Լիւցերն լճում կանգնած մի շոգենաւից, որովհետև ճանապարհորդները և մանաւանդ ճանապարհորդուհիք հանգիստ չէին թողնում և ձանձրացնում էին նրան իրանց հետաքրքրութեամբ։

* * *

Անընդհատ անձրևները Մէքսիկայում մեծ հեղեղներ գոյացրին։ Մի քանի քաղաքներում բնակարանները լցված են ջրով, տները քանդված, երկաթուղիները փչացրած։ Լէօնում և Սիլաօում ջուրը յանկարծ պատեց քնած բնակիչներին և քանդեց մօտ երկու հազար տներ. 700-ից աւելի մարդիկ խեղդվեցան։ Մի ուրիշ քաղաքում մօտ 1,500 մարդիկ խեղդվեցան։

* * *

Ումէօում և Ջունդվազիլում (Շվէյցիայում) հրդեհներից պատճառած վնասը մօտ 31 միլիոն կրոն են հաշւում։ Մօտ տասներկու հազար մարդիկ առանց ապաստանի մնացին։

* * *

Ֆրանսիական հանրապետութեան նախկին նախագահ Գրէվի շուտով կը վերջացնի իր յիշողութիւնների գրելը։ Գրէվի իր գրուածքի մի քանի կտորներն արդէն կարդաց իր մերձակայ բարեկամներին, որոնք շատ հաւանեցին Գրէվիի թէ կարծիքների լրջութիւնը և թէ հայացքների պարզութիւնը։ Յիշողութիւնների մէջ ոչինչ չէ ասված Գրէվիի անկման մասին, և նոյնպէս Վիլսոնի գործի մասին։ Յիշողութիւնները ամփոփում են իրանց մէջ մինչև 1886 թուի անցքերը։ Զար լեզուներն ասում են, որ նախկին նախագահի յիշողութիւնների մի քանի գլուխները պատկանում են Վիլսոնի զրչին, մանաւանդ յիշողութիւնների այն տեղերը, որտեղ շատ անէկդոտներ կան Գրէվիին հակառակ կուսակցութեան պատկանող պետական անձանց մասին։ Գիրքը մտադրութիւն կար առաջ Լօնդոնում հրատարակել, բայց յետոյ Գրէվի աւելի ձեռնտու գտով ծախեց իր գրուածքը Նիւ-Յօրկի մի նշանաւոր հրատարակչական ֆիրմայի վրա։

* * *

Հանգուցեալ Ֆրիդրիխ III կայսրի վերջին հրամաններից մէկն էր՝ ցմահ 3000 մարկ թոշակ նշանակել մանկական այգիների հուչակաւոր հիմնադրի, Ֆրիդրիխ Ֆրէօբէլի այրին, որը այժմ Համբուրգում է ապրում։

* * *

Նիւ-Յօրկի դատարանը ամերիկական երկաթուղիական մի մեծ ընկերութիւն 10,000 դոլլար տուգանքի ենթարկեց. ընկերութիւնը այդ գումարը պէտք է տայ Տիլէր-Մակ-Նէր անունով մէկին։ Այդ պարոնի աչքում չոգեշարժ մեքենայից մի կայծ ընկաւ երկաթուղու վագոնում նստած ժամանակ, և այդ պատճառով մի աչքով կուրացաւ։ Այդ դատավճիռը ապացուցանում է, որ Ամերիկայում մարդկային աչքը 10,000 դոլլար արժողութիւն ունի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԴՍՊԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Ֆինլանդիայից հաղորդում են, որ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին «Գեներալ-Ադմիրալ» նաւով յունիսի 21-ին ժամանեցին Բէօրկ։ Ժողովուրդը հիացմամբ ողջունում էր ափից Նոցա Մեծութիւններին։ Օդոստափուռ ճանապարհորդները տեղափոխվեցան Կայսերական «Царевна» նաւի վրա, որը «Ալէքսանդրիա», «Սվէաբօրգ» նաւերի և ֆիննական մի քանի շոգենաւերի ուղեկցութեամբ ուղղեց իր ընթացքը դէպի արևմուտք։—«Гражданинъ» լրագրին հեռագրում են Վարշավայից, որ Մեծ-Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ Նովո-Գէորգիէվսկում և Իվան-Գօրոդում նայեցին զօրքերը և ամրութիւնները։ Հին բերդերը, կատարելագործված նորագոյն տեխնիկայի շնորհով, իրաւ որ այնպիսի ամրութիւններ են, որ կարող են մեծ աջողութեամբ պաշտպանել երկրի սահմանները։—«Новости» լրագրի տեղեկութիւնների համեմատ, մեր կառավարութիւնը համաձայնվելով շաքարային գործի մասին Լօնդոնի կոնֆերէնցիայի կայացրած եզրակացութիւնների հետ, այս օրերս թոյլատրութիւն տուաց իր լիազօրներին ստորագրել արտասահման տանվող շաքարի համար տրվող պրէմիաները ոչնչացնող միջազգային դաշնագիրը։ «Новости» լրագիրը լսել է, որ պետական խորհրդի վերջին նիստերից մէկում ընդունվեցաւ նահանգական ագրոնոմների պաշտօններ հիմնելու օրինագիծը, և այդ նպատակով պետական կալուածների մինիստրութիւնը, փորձի համար, երեք տարիների ընթացքում տարեկան 15,000 բուրլ կը տայ։ Մինիստրը պէտք է ընտրէ այն նահանգը, ուր ամենից առաջ անհրաժեշտ կը լինի այդ նորմուծութիւնը։ Եթէ գիւղատնտեսները կամ գիւղացիները կը դիմեն մի որ և իցէ հարցի առիթով, նահանգական ագրոնոմների պարտականութիւնը պէտք է լինի խորհուրդներ տալ նրանց և պարզաբանել գիւղատնտեսական հարցերը։—Լրագիրները հաղորդում են, որ պետական կալուածների մինիստրութեանը ներկայացրել են հաստատութեան համար Պոլտավայի նահանգում և ուրիշ տեղերում հիմնվելի մի քանի գիւղատնտեսական ընկերութիւնների նախագծերը, որոնց նպատակն է նպաստել գիւղատնտեսութեան բարւոքմանը և գիւղատնտեսական արդիւնքների վաճառմանը։ Ընկերութիւնը յանձն կառնէ նոյնպէս պաշար մատակարարել զօրքին։

ԿԻԵՎ, 24 յունիսի։ Քաղաքային վարչութեան մէջ յունիսի 5-ին բացվում է մի գրասենեակ, ուր կարելի է ռուսների մկրտութեան տօնախմբութեան մանրամասների վերաբերմամբ տեղեկութիւններ ստանալ։

ՀՌՕՄ, 24 յունիսի։ Պատգամաւորների ժողովում մինիստր-նախագահ Կրիսպի յայտնեց, որ Մէսինայում խօլերա յայտնվելու մասին լուրերը սուտ են։ Կառավարութեան ստացած տեղեկութիւնների համեմատ, ամբողջ Իտալիան ազատ է որ և է հիւանդութիւնից։

ՎԻԵՆՆԱ, 24 յունիսի։ Գալիցեան գնդերի հայրենիք վերադարձը, որ վաղուց սպասվում էր, այս օրս սկսվեցաւ։ Այդ գնդերը գնում են դէպի Պրժէմիսլ և Ռժէշով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը բէալական ուսումնարանների մասին։ Այդ վերջինների մէջ մտադրութիւն կայ բանալ վեց դասարան տարեկան դասընթացքով. բէալական ուսումնարանները, ուր հնարաւոր կը լինի, կարող են պատրաստական դասարաններ ունենալ. 5-րդ և 6-դ դասարանները կարող են երկու բաժանմունք ունենալ իւրաքանչիւրը՝ հիմնական և առևտրական. հիմնական բաժանմունքում կարող է էլի մի բարձրագոյն լրացուցիչ դասարան լինել, մասնագիտական բարձրագոյն դպրոցների համար պատրաստելու նպատակով։ Զէմստվօի, ընկերութիւնների, դասակարգերի և մասնաւոր, բայց կառավարութիւնից հաստատված պաշտօնական անձանց հաշվով գոյութիւն ունեցող բէալական ուսումնարանները նոյն իրաւունքներն են վայելում, ինչ որ պետական դպրոցները։ Բէալական ուսումնարաններում կարող են սովորել ամէն դասակարգին պատկանող անձանց որդիքը, առանց կոչումի և կրօնի խտրութեան։ Պատրաստական դասարանում ընդունվում են 8 տարեկանից ոչ փոքր և 10 տարեկանից ոչ մեծ երեխաներ, իսկ առաջին դասարանում—10-ից մինչև 13 տարեկան հասակը։ Վճարը որոշում է ուսումնարանի խորհուրդը և վաւերացնում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրը։ Բէալական դպրոցում և լրացուցիչ դասարանում ուսումն աւարտածները կարող են մասնագիտական բարձրագոյն դպրոցներ մտնել, ենթարկվելով ստուգողական քննութեանը։ Զինուորակոչութեան դէպքում, վեց դասարանի դասընթացն աւարտող անձինք վայելում են առաջին երկու կարգերի ուսումնարանների իրաւունքները։ Բէալական ուսումնարանների կերպարանափոխութիւնը կը սկսվի 1888/9 ուսումնական թվից։ Այն ուսումնարաններում, որտեղ ընդհանուր և տեխնիկական բաժանմունքներ կան, մինիստրը իրաւունք ունի փակել վերջինները, պահպանելով մեքենական-տեխնիկական բաժանմունքը։

ՓԱՐԻԶ, 25 յունիսի։ Այսօր առաւօտեան ոստիկանական պաշտօնեան յարգանքս գրաւեց օրլէանեան մամուլի գլխաւոր խմբագիր Գիւիֆէյլի մօտ գտնված Փարիզի կոմսի նամակի մի քանի օրինակները, որոնք ուղղված էին նորերս ընտրված պահպանողական մէրերին։ Այդ նամակի մէջ ասված է՝ «Դուք պէտք է պաշտպանէք քաղաքային ֆինանսները աւերիչ և բռնաւորական վարչութեան դէմ։ Այն կուսակցութիւնը, որի ձեռքում այդ վարչութիւնը մի հլու գործիք է, անուանարկ է անում հանրապետութիւնը և նրան դէպի կորուստ կը տանէ։ Մօտիկ է այն օրը, երբ մենք բոլորս պէտք է միանանք՝ Ֆրանսիայի կառավարութիւնը ուրիշի ձեռքը յանձնելու և նրան հաստատ հիմքի վրա դնելու համար։ Հանրապետութիւնը չը տուաց խոստացած ազատութիւնը համայնքներին. հանրապետականների համար ամէն միջոցները լաւ են, միայն թէ կարողանան քաղաքային խորհուրդների մեծամասնութիւնը գրաւել. համայնքը բաղկացած է ճշնշողներից և ճնշվածներից. ստորադրված լինելով պարտաւորեցուցիչ բիւդժէտի կանոնին, նա այլ ևս անկախ կերպով չէ կարողանում հոգալ իր բարօրութեան վրա։ Ծնողները այժմ այլ ևս չեն կարողանում իրանց ցանկացած կրթութիւնը տալ իրանց զաւակներին։ Պատահական կառավարութիւնը շատ կարելի է կը խոստանայ ձեզ վերականգնել ձեր կորցրած իրաւունքները, սակայն մի յուսաք, որ նա կարողանայ այդ իրաւունքները ձեզ վերադարձնել։ Կառավարութեան առաջին հոգսը կը լինի ջնջել և այն աղաղութիւնը, որ դեռ ևս մնում է ձեզ մօտ։ Միայն միապետութիւնը կարող է վերադարձնել ձեզ ձեր ազատութիւնը. միայն միապետութիւնը կարող է վերահաստատել կարգը թէ համայնքի և թէ պետութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ «С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ գիւղատնտեսական ընկերութիւնների և մասնաւոր գիւղատնտեսների բաղմաթիւ միջնորդութիւնների պատճառով՝ ոչառևտրական նպատակով ներմուծվող գիւղատնտեսական գործիքներից և մեքենաներից վերցվող մաքսահարկերը կը պակասացնվեն մինչև 25 մասական կօպէկ պուդից։—Պետերբուրգի բօրսա. Թիֆլիսի և Բուխարայի կալուածական բանկերի գրաւական թղթերն արժեն՝ առաջինը 98 ր., իսկ վերջինը $97^3/_4$ ր., Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան օրլիգացիաները արժեն $82^1/_4$ բուբլ։

ՄՕՍԿՎԱ, 25 յունիսի։ Նահանգական դատարանում սկսվեցաւ սենատի կողմից չը վաւերացրած գործը՝ Մօսկվայի փօստատնից 120,000 բուբլ յափշտակելու մասին։ Կէտիսուդով և Մախրովկի մեղադրեալները բանտարկված են, իսկ Պանով ազգանուն կրող երրորդ մեղադրեալը ազատ է։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 25 յունիսի։ Ածխարդինաբերողների ժողովը պարզաբանեց, որ ածխային ճգնաժամի պատճառը ոչ թէ վագոնների դժուար ձեռք բերելն է հարաւային երկաթուղիների վրա, այլ ճգնաժամի պատճառը քարածուխի հանքերից մինչև երկաթուղու կայարանները դանված վատ ճանապարհներն են։

ՊԵՇՏ, 25 յունիսի։ «Pester Lloyd» լրագիրը իր այսօրվայ առաջնորդող յօդուածում յայտնում է, որ գերմանական միապետի սպասվելիք տեսակցութիւնը ռուսաց Թագաւոր Կայսրի հետ ոչինչ վտանգ չը պիտի զարթեցնի Աւստրօ-Ունգարիայում. բուլգարական հարցը ամենևին այն նշանակութիւնը չունի, որ նրա պատճառով Եւրոպայի դրութիւնը այդպէս ծանր երևար։ Մի և նոյն լրագիրը հաղորդում է, որ սերբիական պատերազմական մինիստրը ուղարկված է Նատալիա թագուհու մօտ թագաժառանգին Բէլգրադ բերելու յանձնարարութեամբ։ Թագաւորը այդ միջոցին դիմեց միայն այն ժամանակ, երբ սինօդը իրաւացի դատաւ թագաւորի ներկայացրած պատճառները ապահարզան ստանալու համար։ Թագաւորական ապահարզանի գործին վերաբերեալ վերջնական վճիռը սպասվում է աշունքին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ սահմանապահ գնդի կերպարանափոխութիւնը յետաձգված է անորոշ ժամանակով։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը շրջաբերականով առաջարկեց նահանգապետներին չուտով զէմստվօի ժողովների արտակարգ նիստեր կազմել տեղական անտառատէրերին անսառապահ մանաժողովների անդամներ ընտրելու համար։

ՄԻՆՍԿ, 26 յունիսի։ Այսօր $6^3/_4$ ժամին կէսօրից յետոյ Մինսկ ժամանեցին Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլօվնա, որոնց դիմաւորեցին բնակիչները ոգեւորված աղաղակներով։ Մինսկ-Լիբաւա-Բոմբեան երկաթուղու կայարանում մատուցին Նոցա Բարձրութիւններին աղ ու հաց Մինսկի նահանգի քաղաքը և գիւղացիները, իսկ նահանգապետի կինը և աղջիկները մի փունջ մատուցին Մեծ Իշխանուհուն։ Երկաթուղու կայարանից Նոցա Բարձրութիւնները գնացին մայր-եկեղեցին, ուր, ի միջի այլոց, նրանց դիմաւորեցին գիմնազիայի աշակերտները։ Մեծ Իշխանական զոյգը մայր եկեղեցուց գնաց նահանգապետի մօտ թէյ խմելու. երբ Մեծ Իշխանական զոյգը նահանգապետի տան պատշգամբը դուրս եկաւ, Նոցա Բարձրութիւններին կրկին ողջունեց ոգևորված աղաղակներով մի քանի տասնեակ հազար հոգուց բաղկացած ամբոխը։ Թէյից յետոյ Նոցա Բարձրութիւնները գնացին տեսնելու զօրքը և մօտ 9 ժամին վերադարձան նահանգապետի մօտ ճաշելու։ Քաղաքը զարդարված է դրօշակներով և լուսաւորված է։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունիսի 24-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	105 ր.	75 »
Համբուրգի վրա 100 մարկ — . .	52 »	— »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	41 »	80 »
Ոսկի — արժէ — . .	8 »	45 »
Մաքսային կուպօններ — . .	169 »	25 »
Արծաթ — — — . . .	1 »	35 »
Բօրսային դիսկօնտներ՝ — . .	6%	$7^1/_4$% »
Պետական բանկ. 5% տոմս. 1-ին չրջանի	98 »	87 »
— — — — 2-րդ —	98 »	50 »
— — — — 3-րդ —	98 »	25 »
— — — — 4-րդ —	98 »	50 »
— — — — 5-րդ —	98 »	12 »
— — — — 6-րդ —	— »	— »
Նոր 4% փոխառութիւն.	82 »	37 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 »	62 »
— — 2-րդ —	98 »	62 »
— — 3-րդ —	98 »	62 »
Դերբին 5% առաջին փոխառութ.	273 »	— »
— երկրորդ —	248 »	50 »
$5^1/_2$% ռէնտա	101 »	— »

Ոսկեայ բէնտա.	186	›	50 ›
Եօթներորդ կոնսոլիդած փոխառութիւն.	158	›	— ›
Նոր երկաթուղային բէնտա . . .	99	›	— ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	160	›	— ›
Գրաւ. թղ. Աղնս. բանկի . . .	97	›	37 ›
5½% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	98	›	12 ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101	›	— ›
— — Պոլտավայի— —	100	›	75 ›
— —Պետ.Տուլսկ.— —	101	›	— ›
— — Կիևվի — —	101	›	— ›
— — Մոսկվայի — —	101	›	50 ›
— — Բեսարաբ. Տամբ.—	100	›	50 ›
— — Նիժ. Սամար. —	101	›	50 ›
— — Վիլնայի —	100	›	75 ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	—	›	— ›
— —Քութայիսի-18 և 43 տ.	—	›	— ›
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	714	›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	258	›	— ›
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	81	›	— ›
Սանկտ Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92	›	87 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94	›	25 ›
Օդեսայի — — .	93	›	25 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. .	—	›	— ›

Սանկտ Պետերբուրգի բորսայի արժանագրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Societa Cenerale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ.

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԵՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գոլովինսկի պրոսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլիի տանը։

1—40

Abonnementseinladung an
die meist verbreitete deutsche Wochenschrift:

Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschafilichen, wissenschaftlichen nnd gesellschaftlichen Borgänge, welche sich in Deutschland nnd Auslande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.

Das Echo bring in jeder Rummer ein bis zwei abgeschlossene Novelletten, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesoudere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Bote aus der Heimat" sein, deshalb ist auch sein Abounementspreis ein sesr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltposiverein gehöriren Läudern für 4 Mark 50 Pt. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieen anßerhald des Weltposivereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede dentsche Buchhandlung und Zeitungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern find durch die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յուլիսի 7-ին, ԳԱԼԼԻԱ (LA GAULE) *շոգենաւը, նաւապետ* ԳԱՐԻԳ (GARRIGUES) *դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլի և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլոշլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 103.*

2—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱԵՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 1/13 *յուլիսի* ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւը* LE CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) *նաւապետ* REVEL (ՐԷՎԷԼ) *մտնելով Կ. Պոլիս, Զմիւռնիա և Սիրա։*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։

2—2

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ *ցանկանում է հայոց լեզուի և թուաբանութեան դասեր տալ։ Ներսիսեան դպրոցում աւարտած է և* ՄԻ ՏԱՐԻ *արդէն վարել է ուսուցչի պաշտօնը։ Ցանկանում է ուսուցչութիւն անել գաւառական քաղաքներում կամ ձեռնտու պայմաններով գիւղերում։* 1—3

Պարապելով **ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՈՎ**, *խնդրում եմ այդ հարցի հետ ծանօթ անձերին յայտնել ինձ թէ ինչ ձեռագիր կամ տպած աղբիւրներ և հետազօտութիւններ (ամբողջ գրքեր թէ փոքրիկ յօդուածներ պարբերական թերթերի մէջ, եւրօպական թէ ասիական լեզուներով, թարգմանութիւն թէ ինքնուրոյն) յայտնի են նրանց այդ հայ գաղթականների մասին։ Հասցէս՝* Тифлисъ, Сергіевская ул., *իսկ սեպտեմբերին Վարշավայի համալսարան։*

Ս. Լիսիցեանց

1—10

ԴԷՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՏՍԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵԲԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-Փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ Երևանեան հրապարակից), Նարիմանովի տանը ԲԱՑՎԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԵՍՏ ԿԵՐՈՍԻՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ *Մեր ստացած կերոսինը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերոսինից։ Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է։*

ԳՆԵՐԸ ԶԱՓԱՒՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՈՒԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ։

Ծառաների կողմից խաբեբայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերոսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ „Е. А. Цатуровъ. Керосинъ" *գրութեամբ։*

Առաջին պահեստը. ՎՕՐՕՆՑՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պավլովսկու բժշկարանի կողքին։ Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերոսին ստանալ առանձին գրքոյկով և վճարել ամսէ ամիս։ 24—25 (Շ. Ե.)

Въ редакціи газеты „МШАКЪ" продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ", публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ", или Tiflis, Redaction „Mschak". (Ե)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մատները փտելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ծախվում է դեղատներում և դրոգիստների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և Կայսրութեան բոլոր քաղաքներում։ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ *գտնվում է* ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, *հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլեկտրաշնայա փողոց, № 39. Գալմանինի մեծ արկղը արժէ Վարշավայում 50 կ., փոքրը 30 կոպ.*

ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և ֆարիզի ցուցահանդիսի մեդալները։

6—10 (Ե)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յէրկովնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է Լօրկո և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՅԻ *մի ՊՐՕՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և* ՉԻՎԻՆԻ *հռչակաւոր* ՖԻԼՏՐԸ, *որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։*

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում։ Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլտէրեան, մրգային և դազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, *ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղլիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա։*

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշդութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Տարաձայնութիւններից խուսափելու համար, խնդարհարար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի Ն Շ Ա Ն Ա Կ Ը, *քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։*

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 26—50 (Ե)

Մի ուսուցիչ, որ աւարտել է Ներսիսեան դպրոցում, ուսուցչական ինստիտուտում և մի քանի տարի կատարելագործվել է Գերմանիայում մանկավարժութեան մէջ ցանկանում է ուսուցչի կամ տեսչի պաշտօն վարել Կովկասի հայոց ուսումնարաններից մէկում։ Պայմանները կարելի է խնդրել «Մշակի» խմբագրատանը։ 3—3

Дозволено цензурою, Тифлисъ 27 Іюня 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.